Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

5342

Կոչ

Վանեցի հայրենակից-

ներին

9(47.925)
Կ-22

1919

9(47.925)
Կ-22

ԿՈՉ

ՎԱՆԵՑԻ ՀԱՅՐԵՆԱԿԻՑՆԵՐԻՆ

Հայրենակիցներ.

Կեանքը՝ իր տարօրինակ ելևէջներով և անակնկալներով՝ առաջադրում է նոր նոր պարտականութիւններ ու զոհողութիւններ։ Երբեմն նա պահանջում է գերագոյն ինքնամոռացում՝ մինչև անձնազոհութիւն և երբեմն ծայրայեղ նուիրաբերութիւն՝ մինչև մուրացկանութիւն։

Եւ գոյութեան իրաւունքին տէր են համարւում այն ազգերն ու անհատները, որոնք ժամանակին ըմբռնելով կեանքի հրամայական պահանջները, յօժարութեամբ ընդառաջ են գնում և ցուցահանում են գնահատելի կենսունակութիւն և գովելի գործունէութիւն։

Մենք էլ մի փոքրիկ ժողովուրդ էինք՝ շըրջապատուած անկուլտուրական ու բարբարոս տարրերով, որոնք ուրիշ բան չը գիտէին բացի քանդելուց, աւերելուց ու կոտորելուց, ահա ընկերային և աշխարհագրական այդ դժնդակ պայմաններից է ծնունդ առել մեր պատմական

առաքելութիւնը — կուլտուրական, ստեղծագործող և խաղաղ աշխատանքը։

Դարեր շարունակ շինեցինք մենք, բայց քանդեցին մեր հարևանները, մտածեցինք ու ստեղծեցինք մենք, բայց խափանեցին նրանք. ձգտեցինք կուլտուրական ժողովրդի վայել լուսագոյն մի կեանքի, բայց կտրեցին մեր լեզուն ու թևերը։ Սակայն յիշում էք անշուշտ որ հակառակ այդ արգելքների, հարիւրներով էին հաշւում մեր փոքրիկ նահանգի ժողովրդական դպրոցները և տասնեակներով՝ մեր գրադարանները, որոնց դէմ մեր հարևան ժողովուրդները — կառավարութիւնն էլ հետը հաշւած՝ իր հարիւր հազարների պիւտճէով չունէին գոնէ մի տասնեակ։ Յիշում էք նաև առևտրի և վաճառականութեան մէջ մեր գերակշիռ ու պատուաւոր դիրքը, որը շարժում էր օտարների նախանձն ու ատելութիւնը։

Սակայն եկաւ մի օր էլ, երբ մեր դահիճները, չբաւականացան սովորական հալածանքներով և որոշեցին ձեռքերի ու ոտքերի փոխարէն կտրել միանգամից մեր գլուխը՝ ցանկանալով սպանել մեր միտքը, որը անվերջ ձգտում էր ընդգրկել աւելի և աւելի լայն հորիզոններ։

Շատ ժամանակ չի անցել այդ օրից-ընդա- Գ

2004

81366-ու 743-89

ժէն չորս տարի, — և ձեզանից շատերը վկաներն ու ստեղծողներն են այն փառաւոր գոյամարտի, երբ մի օրւայ ընթացքում զարթ ու հանդարտ վանը վերածւեց կուռ ու եռուն Լիէժի, երբ մի ըոպէում լռեցին կուսակցական և դասակարգային հակամարտութիւնները, երբ դիշերը կորցրեց իրա իսատը և կարիքն ու սերը՝ իրանց տարբերութիւնը երբ հանգիստն ու դադարը խոյս տուին մեր խրամներից և այս բոլորի ներդաշնակ միութիւնը ստեղծեց մեզ ու բոլանդակ հայութեան համար անմեռ փառքի անջնջելի փաստեր և գոյութեան անկապտելի իրաւունք։ Երգով ու ժպիտով դիմաւորեցինք «իմացեալ մահ»-ին և նա չյանդգեց մօտենալ մեր դռներին։ Դժբաղդաբար պատերազմի մի դժնդակ խաղի ելևէջ, մեր մի բուռ ժողովուրդն էլ լքեց իր լաւագոյն զաւակների արիւնով ներկւած հայրենի օճախը և գրեց ընդարձակ Ռուսաստանի զանազան անկիւններ։ Մեծ հիասթափութիւնը, նոր միջավայրի պայմանները և խօսող լեզի անծանօթութիւնը, սակայն չկարողացաւ արգելք լինել մեր ժողովրդի ընդունակութիւնների զարգացման. նրա զաւակները հնարաւորութիւն ստեղծեցին երևան բերելու իրանց հասարակական ջիղը և առևտրականի ընդունակութիւնները. արդիւնքը հրապարակի վրայ է արդէն։

Հայրենակիցներ.

Այժմ վերջացել է համաշխարհային պատերազմը իր արհաւիրքներով և անօրացած սարերի ետևից շատ պարզ ու յստակ երևում է ուրուագիծը այն հայրենիքի, որի ազատութեան համար զոհել ենք ամեն ինչ և վերածնունդին հաւատացել ենք հայավայել անշեղ հաւատքով։

Որ այդ վերածնունդը վերջացնելու է մեր տանջանքները, դրա մասին տարակոյս չկայ. բայց մի րոպէ մտածել. թէ մեր խնամակալ պետութիւնները պիտի ամեն ինչ պատրաստեն մեզ համար և հետևաբար որ և է աշխատանք չի մնում մեզ անելու.—դա առնուազն անմտութիւն կը լինի։

Հայրենակիցներ. շինարար աշխատանքի շրջանն է սկսելու. հսկայական աշխատանք է պահանջւում մեր մոխրակոյտ օճախների, դպրոցների ու գրադարանների, թատրոնների ու եկեղեցիների, մեր գեղարուեստի ու գրականութեան, արհեստի ու վաճառականութեան և հողի ու հողագործութեան վերածնունդը։ Այս բոլորը պահանջում են նիւթական և բարոյական ուժերի ներդաշնակ միացում. և ինչ խօսք որ նման պարագաներում հայրենակցական խմբերը կազմում են այն գլխաւոր օղակները, որոնք միև-

նոյն նպատակի շուրջը հաւաքուած են միենոյն հողի զաւակներին և այդպիսով կազմում են միակերպ մտածողների մի բանակ՝ ընդունակ համերաշխ ու շինարար աշխատանքի։

Վանեցի հայրենակիցներ.

Կազմուած է արդէն մեր հայրենակցական Միութիւնը և կառավարութիւնից վաւերացուած. հաւաքւինք այդ միութեան շուրջը և գործով ապացուցենք որ մեր գլխից անցած անօրինակ աղէտները չեն յաջողել մեռցնել մեր մէջ նախաձեռնող և ստեղծագործող ոգին, որ՝ մենք գնում ենք ժամանակի և նրա պահանջների հետ զուգընթաց, որ՝ մասնաւոր կեանքից առաջ մենք ընդունակ ենք ապրելու հանրային կեանքով և հանրութեան համար։ Ահա թէ ծրագիրը ինչպէս է բնորոշում մեր նպատակը.

«1) Նիւթական և բարոյական օժանդակութիւն հասցնել Եկատերինոդարի և հնարաւորութեան պարագային նաև այլ վայրերի օգնութեան կարօտ մեր հայրենակիցներին՝ մասնաւորապէս գործ հայթայթելով։

2) Օժանդակել հայրենակիցների ներգաղթին և նպաստել հայրենիքի վերաշինութեան գործին»։

Ինչպէս տեսնում է վերևի յօդուածներից,

մեր գործունէութիւնը չի ընդգրկում միայն ապագան մենք գործ ունենք կատարելու ոչ միայն հայրենիքում, այլև մանաւանդ այստեղ՝ Ռուսաստանում, ուր չորս տարուայ թափառիկ ու անկայուն կեանքից յետոյ, մեր հայրենակիցներից շատերը կատարելապէս քայքայւել են նիւթապէս ու ֆիզիքապէս։ Անհրաժեշտ է օգնութեան հասնել նրանց, բայց ոչ անշուշտ նպաստի այն թունաւոր սիստեմով, որը սրսրեց մեր արժանապատուութիւնը և սպանեց մեր ձեռնարկութիւնը։ Ահա այս նկատումներով է որ մենք ժխտել ենք նպաստը և փոխարինել ենք գործ հարցրելով, որովհետև համոզուած ենք որ առողջ գործարանների տէր ամեն մի կին կամ տղամարդ կարող է որևէ աշխատանք կատարել ու ապրել։ Հերիք է ինչքան բամբասեցինք որպէս ձրիակերներ. ցոյց տանք որ միշտ էլ ընդունակ ենք սեփական աշխատանքով ապրելու, վստահ ենք որ գիտակցութիւնը մեր ցան ու ցրիւ հայրենակիցներին պիտի մղէ դէպի հաւաքական աշխատանք։

Երկրորդ կէտը, որ պէտք է աչքի առաջ ունենալ, դա ներդաղթի հարցն է։ Կիսաւեր հայրենիքից գաղթեցինք շէն Ռուսաստան, իսկ այժմ այդ շէն հայրենիքից դառնում ենք դէպի աւե-

րակ հայրենիք, ուր առ այժմ պակասում են պե-տական և հասարակական կազմակերպութիւննե-րը, պակասում են նոյնպէս բաւարար բնակա-րաններ և չափաւոր սնունդը։ Այս ձախող պայ-մանները կարող են նոր նոր Վաղարշապատներ ու Երևաններ ստեղծել, նոր նոր գերեզմաններ պատրաստել մեր սիրելիներու համար, եթէ հէնց ինք ժողովուրդը՝ յանձին իր հասարակական կազմակերպութիւնների չը դասաւորի ներգաղթը և չը դնի նրան ամուր ու կազմակերպուած հիմ-քերի վրայ։ Ժողովրդի ձեռքում գտնւող կոպէկ-ները չեն կարող փրկել նրան կորստից, անջատ-անջատ թափւող ճիգերը անզօր են չքացնել ներգաղթի հաւանական վտանգները, եթէ գոյու-թիւն չունենայ հէնց այդ ժողովրդի հասարա-կական կազմակերպութիւններ ներդաշնակ գոր-ծունէութիւնը։

Դէպի գործ, ուրեմն արդէն շատ ենք ուշա-ցել, իւրաքանչիւր րոպէն թանգ է մեզ համար. համրուած են մեր պանդխտութեան օրերը և ա-մօթ կը լինի, եթէ պարապ ձեռքերով դառնանք հայրենիք, առանց գոնէ կուլտուրական կեանքի մէկ քանի սաղմեր տանելու մեզ հետ։

Հաւակնութիւն չունենք մեծ գործ կատա-րելու, որովհետև սուղ են մեր միջոցները և

9360
10-00

սահմանափակ է մեր թիւը, բայց մենք ինչ որ կարող ենք, այնքան կարիք կայ աշխատող ձեռքերի, որ ոչ մէկը նրանցից անուշադիր ու անպէտք չի անցնելու։

Մենք ինչ որ կարող ենք, որովհետև մեծ աւօթ կը լինի մեզ համար, եթէ մեր օրերի պատմութիւնը այն վճիռը կայացնէ մեր մասին, թէ այս սերունդը այլևս անընդունակ է ստեղծագործող շինարար աշխատանքի*։

Վանեցիների հայրենակցական միութեան
ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

Մայիսի 1919 թ.
Եկատերինոդար

---

*) Ծանօթ.— Խնդրում է հրատ. Կովկասի քաղաքներում ապրող Վանեցի հայրենակիցներին կազմել միութիւններ և կապ հաստատել Եկատերինոդարի Միութեան հետ, որի հասցէն է Екатеринодаръ, Красная 69, магазинъ Армаконъ, для М. Налбандяну.

Նամակներ և դէպներ կարելի է ուղարկել միևնոյն հասցէով։

9(47·925)
Ա-22